ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԲԱՐՈՅԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

(ըստ «Մեկնութիւն «Երգ Երգոցի» աշխատության)

Երկար ժամանակ Գրիգոր Նարեկացու մատենագրական ժառանգությունն ուսումնասիրվել ու գնահատվել է հիմնականում հայ իրականության մեջ եւ այն էլ կրոնական ու բանասիրական տեսանկյունից, սակայն վերջին շրջանում համաշխարհային գիտական միտքը հարաճուն հետաքրքրություն է ցուցաբերում նրա նկատմամբ. օրինակ՝ դեռեւս անցյալ դարի երկրորդ կեսին լիտվացի նշանավոր բանաստեղծ Էդուարդաս Մեժելայտիսը, առաջադրելով Նարեկացու բարոյափիլիսոփայական հայացքների ուսումնասիրության խնդիրը, գրել է. «Նարեկացին համաշխարհային գրականության մեջ փիլիսոփայական ուղղության ամենահետաքրքիր բանաստեղծներից մեկն է եւ ամբողջական հետազոտության է արժանի: Ուզում եմ հավատալ, որ ժամանակակից գիտությունը դա կանի: Եւ այն ժամանակ անցած դարերի մեծ մտածողը կկանգնի համաշխարհային պանծալի մտածողների շարքում»[1]: Իսկ ռուս հայտնի գրականագետ եւ բանաստեղծ Վլադիմիր Ռոգովն այսպես է գնահատել Նարեկացուն. «Եթե հայ ժողովուրդն իր հոգու թանկարժեք ոսկեփյուռներից կարողանար ներկայացնել միայն այս կերտվածքը, այդ պարագան դարձյալ նրա համար ապահովված կլիներ ամենապատվավոր տեղերից մեկը համաշխարհային մշակույթի պանթեոնում»[2]:

Գրիգոր Նարեկացու բազմախորհուրդ ստեղծագործության խորքային էությունն ըմբռնելու հարցում առաձնակի հետաքրքիր են նրա՝ «Համառոտիւք բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» (հետ այսու՝ «Խրատ») եւ «Մեկնութիւն Երգոց Երգոյն Սողոմոնի» աշխատությունները: Ներկայումս Նարեկացու գրական ժառանգությունից մեզ հետաքրքրում է հատկապես վերջինը, որովհետեւ այս երկում քննարկված շատ հարցեր ու դրանց տրված պատասխանները այսօր եւս չեն կորցրել իրենց կարեւորությունը: Ավելին, ըստ մասնագետների՝ «Երգ Երգոցի» մեկնությունը նշանակալի է մի շարք առումներով: Համառոտակի անդրադառնանք դրանց.

1 **Э. Межелайтис**, Читая Нарекаци, Ереван, 1997, с. 18.
2 **Вл. Рогов**, Читая Нарекаци, Ереван, 1974, с. 90.

ա. Բացառիկ է, որովհետեւ ծնունդ է ոչ թե սեփական մտահղացման ու ստեղծագործական ինքնաբուխ պոռթկման, այլ թագավորական հանձնարարության: Հանգամանք, որը մի կողմից կաշկանդել է հեղինակին, իսկ մյուս կողմից՝ հնարավորություն է տվել արտահայտելու այնպիսի մտքեր ու գաղափարներ, որպիսիք նրա մյուս ստեղծագործություններում կամ չեն հանդիպում, կամ եթե հանդիպում են, ապա ոչ այդպես պարզ ու հստակ:

բ. Ճիշտ է, հեղինակը համաձայնել է գրել մեկնությունը, բայց մինչեւ վերջ չի ազատվել այն զգացումից, որ «զբանս սրբոց գրոց օտար մեկնութեամբ» աղավաղելու դեպքում իրեն սպասվում են ոչ փոքր «դատապարտութիւն եւ պատիժք»:

գ. Խոսքաշատ բանաստեղծն այս երկում անընդհատ կապանքներ է դնում իր մտածողությանն ու լեզվին՝ հիշեցնելով, որ ի տարբերություն այլ մեկնիչների, ինքը ձգտում է համառոտության: Օրինակ՝ «...գիտես եթէ զհամառօտն եմ յախորժել»[3], «...զոր այլ վարդապետք մանր կտտեն, ես համառօտեմ» (էջ 308) եւ այլն: Մեկնիչ Նարեկացին, զգալով իր սկզբունքի վտանգավորությունը, երբեմն հարկ է համարում թագավոր-պատվիրատուին ասել, որ «եթէ երկայն կամիս լսել զբանս, երթ առ Նիւսացին Գրիգոր» (էջ 285):

դ. Հեղինակի զգուշավորությունն ու անազատությունը շատ հստակ է երեւում հատկապես «Երգ Երգոցից» ու աստվածաշնչյան մյուս գրքերից կատարված մեջբերումների առատությունից եւ դրանց մեկնությունների չափազանց ժլատությունից: Մինչդեռ՝ հակառակ պատկերն ենք տեսնում, երբ մեկնիչն անդրադառնում է իրօրյա խնդրիներին, ասես միանգամից դեն է նետում միտքն ու լեզուն կաշկանդող կապանքներն ու արտահայտում այնպիսի գաղափարներ, որոնցից շատերն այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքն ու նշանակությունը:

ե. Այս աշխատությունը Գրիգոր Նարեկացու գրական ժառանգության մեջ բացառիկ է այն առումով, որ նրա գործերից միակն է, որն ունի հեղինակի կողմից նշված՝ գրության հստակ թվական, ինչն էլ կարող է մասամբ կողմնորոշիչ լինել Նարեկացու անունով մեզ հասած առանձին գործերի գրության ժամանակն ու հեղինակային պատկանելության հարցը լուծելու համար:

զ. «Երգ Երգոցի» մեկնությունը կարեւորություն ունի նաեւ այն առումով, որ գրված լինելով ստեղծագործական հասունության արշալույսին՝ հնարավորություն է ընձեռում հետեւելու բանաստեղծի աշխարհայացքային, գաղափարական ու հոգեբանական ընթացքին, եւ ըստ այդմ՝ ավելի լավ հասկանալու կյանքի մայրամուտին ստեղծված «Մատեան Ողբերգութեան» գլուխգործոցը[4]:

---

3 «Մատենագիրք Հայոց», հտ. ԺԲ., Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 287 (այսուհետեւ այս գրքից հղումները շարադրանքում՝ փակագծի մեջ):

4 Տե՛ս **Հ. Միրզոյան** , Նարեկացիագիտական հետազոտություններ, Երեւան, 2010, էջ 322-325:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացնենք բարոյաբանական բնույթի որոշ հիմնահարցեր, որոնք այսօր էլ կարող են դրական եւ ուղղորդիչ դերակատարում ունենալ՝ կյանքը դարձնելով առավել վեհ ու գեղեցիկ:

1. Քրիստոսի պատվիրանները՝ Աստծուն որդեգրվելու նախապայման. Ակնհայտ է, որ Նարեկացին իդեալիստ մտածող է, ինչն այս աշխատությունում ավելի ցայտուն է արտահայտված: Նրա գաղափարների ենթակարգում բարձրագույն տեղում Աստված է, որ ամենայնի արարիչն ու մարդու փրկիչն է: Նրան ճանաչել անհնար է. լավագույն դեպքում պատվիրանների միջոցով կարելի է պատկերացնել եւ դրանց օգնությամբ ուղղորդվել դեպի վեհը, գեղեցիկն ու բարին, քանի որ անկատար մարդու համար Նա է կատարելության չափանիշը. «Զի տալն զկատարելութիւնն ի նմանէ է եւ պահելն ի մէնջ լինի» (էջ 816): Աստված, ըստ հեղինակի, նաեւ սեր է ու այդ առումով՝ կյանք եւ կենսագործունեություն: Նա իր անսպառելի սիրուց դրդված՝ հանուն մարդու մարդանում է, որպեսզի մարմնական, անձնավորված աստվածմարդուն «հաղորդակցվելով»՝ մարդ արարածը վեր բարձրանա դեպի «մարդ-աստված»: Այս դատողություններից ելնելով՝ հեղինակն իր աշխատության սկզբնամասում նախ գովերգում է պատվիրատու թագավորի նախաձեռնությունը, համեմատում նրան Դավթի հետ. «Զի որպէս ծառ, որ տնկեալ է ի գնացս ջուրց, անթարշամ է, նոյնպէս եւ որ զպատուիրանս Աստուծոյ քննէ եւ այնմ հոգ տանի ի տուէ եւ ի գիշերի, այնպէս անթարշամ մնայ յայնմ ի կեանս. Եւ զամենայն, զոր ինչ առնէ, յաջողէ նմա Աստուած, որպէս Դաւթին իսկ յաջողեաց» (էջ 761), հետո անցնում է բուն գործին եւ պարզաբանում, թե ինչ է «Երգ Երգոցը» եւ ինչու է գրվել: Ըստ Գրիգոր Նարեկացու՝ վերջինս մի ստեղծագործություն է, որի նպատակը մարդուն այլաբանորեն գեղեցիկ, բարի եւ ճշմարտ գաղափարներ ներշնչելով աստվածային գաղափարներին հաղորդակից դարձնելն է: Սողոմոնը երկնային անտեսանելի գաղափարները նմանեցրել է կյանքի հրաշալի երեւույթների՝ հարսի ու փեսայի, եղբորորդու եւ օրիորդի, դստեր եւ աղավնու, ինչպես նաեւ այլ ակնահաճո, ախորժալուր ու մտափափագ բաների: Հեղինակն այդ մոտեցումով մեկնությունը գրելիս փորձում է բարի, գեղեցիկ եւ վեհ գաղափարները հակադրել անբարո, տգեղ ու նսեմ երեւույթներին: Նույնիսկ այն տպավորությունն ենք ստանում, որ կարծես Նարեկացին, իրական կյանքի խնդիրներով մտահոգված, ցանկանում է «Երգ Երգոցի» մեկնությունը վերածել քրիստոնեական ուսմունքի մեկնության. «Նոյն Հոգի ուսոյց Սողոմոնի մի՛ յայտնապէս սփռել, զորս ետես հոգւով լուսոյն, եւ մի՛ ամենեւին թաքուցանել զխորհուրդ Եկեղեցւոյ եւ զփրկութիւն, եւ զՔրիստոսի մարմնանալն, եւ զամենայն ինչ, զոր կրեաց վասն մարդկան սիրոյ» (էջ 763): Կարեւորը նշված խորհուրդների հանդեպ ոչ թե ձեւականորեն, ի ցույց մարդկանց առաքինի ու պարկեշտ երեւալն է եւ ինքնախաբեությամբ ինչ-որ կարծեցյալ փրկության սպասելը, այլ՝ Աստծուն հավատալով, լավն ու վատը, բարին եւ

չարը, ճշմարիտն ու կեղծը գիտակցելով՝ դեպի փրկություն շարժվելը, որը ոչ այլ ինչ է, քան Աստծուն որդեգրում: Այդ հարցադրումը Նարեկացին կատարում է պարզ ու հստակ կերպով. «...զի Աստուծոյ որդի եղեր, եւ որ որդի Աստուծոյ արժանաւոր լինել, ամենայնիւ կատարեալ է, զի այլ զի՞նչ բարձրագոյն փառք գոյ, քան զայս յերկրի կամ յերկինս» (էջ 816): Բայց եթե մարդը չպահի ու չարդյունավորի Աստծուց տրված շնորհները՝ օրենքը, իմաստությունը, հավատը, ոչ միայն կզրկվի «Աստծուն որդեգրվելու» սրբազան ուխտից, այլեւ կարող է նմանվել նախահորը, որը նույնպես ստանալով աստվածային շնորհ, չպահելով եւ չարդյունավորելով այն՝ կորստյան է մատնել մարդկությանը:

Մեծ նշանակություն տալով Սուրբ Գրքի կազմության հարցերին եւ վերջինիս բարոյաբանական սկզբունքների կանոնական ընկալմանը՝ Գրիգոր Նարեկացին նկատում է, որ դրա տարբեր մասերը՝ Հին ու Նոր կտակարանները, մեկ միասնական ժողովածու են: Մարդուն Հին Կտակարանով տրվել է օրենք, բարոյական որոշակի արժեհամակարգ: Իսկ Նոր Կտակարանում առկա են մարդկային իրավունքի եւ ազատ կամքի պատվիրաններ: Վերջինս, ըստ Նարեկացու, մարդուն շնորհվել է ողորմածությամբ՝ Քրիստոսի զոհաբերությամբ: Հեղինակը ավետարանական որոշ առակներ մեջբերելիս իր մոտեցմանը համապատասխան բացատրություն է տալիս դրանց. «Զի մի ի տասանցն բորոտացն դարձեալ առ Տէր եւ գոհացեալ ի ձայն մեծ փառաբանութեամբն ի վերայ մարմնոյ բժշկութեանցն, որ եւ զՀոգւոյն եւս ստացաւ զլուսաւորութիւն եւ զհաւիտենական կեանսն» (էջ 865): Անդրադառնալով բորոտների բժշկման հրաշագործությանը՝ նա գովերգման է արժանացնում բժշկվածի վերաբերմունքը: Ըստ մեկնիչի՝ սուրբգրային այս հատվածը սոսկ պատում չէ, այլ նրանում արտահայտված է մարդու ազատ կամքը, գնահատելու կարողությունը: Նարեկացին, «Երգ Երգոցի» հատվածները պարզաբանելով այդ տեսանկյունից, փորձում է ցույց տալ, որ Նորը, լրացնելով Հնին, մարդուն շնորհում է ամենակարեւորը՝ ազատության, հոժարության եւ ընտրության գաղափարներ, եւ եթե մարդ արարածը հնարավորություն ունենար արժանապես հաղորդակցվելու դրանց, ինքը կտնօրիներ իր կյանքը, ընտրություն կատարողը ինքը կդառնար, քանի որ նորում շատ բան կախված է հենց մարդուց: Մարդն իր կամքով կարող էր բռնել «որդեգրվելու» ուղին եւ իր ես-ը շարունակաբար կատարելագործելով՝ ընթացքն անդադար ուղղել առ Աստված: Հեղինակի խոսքերից հետեւում է, որ մարդն այդպես կդադարեր «օրենքի համար» ապրելուց եւ կեղծ աստվածպաշտությունից: Պետք է ոչ թե սպասել փրկության, այլ գնալ դեպի այն: «Զնոյն զառաջին բանս կրկնեաց՝ հաստատելով զիւր կոչումն, թէ ոչ ի ձեռն պատուհանին եւ վանդակապատին, այսինքն մարգարէիք կամ աւրինաւք, այլ իմով իսկ կաչմամբս՝ արի՛ եկ» (էջ 788): Նա կոչ է անում Նոր օրենքը արժանապես պահել՝ ո՛չ Հնի նմանությամբ: Մարդկային կյանքը «որդեգրման» ուղի է: Առ Աստված տանող այդ

ճանապարհին ոչ ոք իրեն կատարյալ չպետք է համարի, քանի որ վերջինս ենթադրում է տեսական եւ մշտական ինքնակատարելագործում: Ըստ Գրիգոր Նարեկացու՝ օրենքը պահելն անհրաժեշտ է, բայց ոչ բավարար՝ որդեգրման ուսմունքը հասկանալու համար: Այն ենթադրում է նաեւ կամք, գիտելիք, ընկալման կարողություն. «Արդ, հրամայէ այսուհետեւ Աւետարանաւն վարիլ եւ նորոցս քարոզութեամբ եւ ոչ աւրինաւքն, որում վկայէ առաքեալն, թէ՝ «Խափանեալ էք ի Քրիստոսէ, որ աւրինաւքն արդարանայք» (էջ 789): Այս եւ նմանօրինակ հարցադրումներից ելնելով՝ հեղինակը խոսում է բնության երեւույթների գեղեցկության, կենդանական աշխարհի հատկությունների, մարդկային հարաբերությունների մասին:

2. Հավատն ու գիտությունը՝ առ Աստված տանող ճշմարիտ ուղի. Բնությունը, բնականը եւ ընդհանրապես գոյություն ունեցող աշխարհը աստվածային ստեղծագործության արդյունք է եւ գեղեցիկ է. այն արժանի է գովքի ու խնամքի: Այդ մոտեցումը ցուցաբերելով՝ Նարեկացին այլաբանորեն բնության հրաշք գեղեցկության գովքի միջոցով մեկնաբանում է բարոյական պտուղները, դրանցից ստացած բարիքները, օգտավետությունը եւ օրինակելիությունը. «Այսու զգեղեցկութիւնն գարնան նշանակէ, որ Քրիստոսիւ եղեւ ի ձմերանոյն հալածմանն, եւ ծաղիկ՝ զարդարոց բազմութիւնն առաքինութեամբքն եւ աստուածպաշտութեամբքն ծաղկեցելովք կոչէ» (էջ 787-789): Գիտությունը անսահման ոլորտ է եւ հարատեւ ընթացք . «Զի որչափ ի գիտութիւն հասանէ մարդ, հիմն լինի առաւել բարձրագոյն գիտութեանն» (էջ 793): Ըստ նրա՝ իմացությունը պարզից դեպի բարդը կատարվող հոգեւոր գործընթաց է, որի նպատակը կատարելագործումն ու բարգավաճումն է: Այն իր բնական ու անհրաժեշտ էությամբ նախապայման է մարդու վեհացման ու կատարելագործման համար: Մեկնիչը սկզբունքորեն նոր մոտեցում է ցուցաբերում ու պահանջում, որ մարդ արարածը ոչ թե կուրորեն եւ մեքենայաբար կատարի պատվիրանները, այլ՝ հասկանալով: Որովհետեւ ոչ միայն հավատի, այլեւ ընկալման միջոցով կարող է տեղի ունենալ Աստված-մարդ հաշտեցումը: Ճշմարիտ գիտելիքը հիմնվում է ճշարիտ հավատի վրա, իսկ այն պահանջում է հարատեւ ինքնակատարելագործում. «Բայց այդ գալդ բաւական մի՛ համարիր, այլ նորից ու նորից եկ եւ այսպէս շարունակ ընթացքի մէջ եղիր, այսինքն՝ առաքինի վարքի մէջ», - գրում է Նարեկացին:

Մեկնության մեջ բարոյական բնույթի գլխավոր խնդիրը փորձությունների, հավատի, գիտելիքի եւ այլ միջոցներով ինքնակատարելագործվելով Աստծուն որդեգրվելն է: Այս հանգամանքը հեղինակն ընդգծված արտահայտում է «Անառակ որդու» առակի միջոցով: Ըստ մեկնիչի՝ բարոյական գործոնը նման է «անառակ որդու» զղջմանը: Եւ ինչպես «անառակ որդուն» նախնական, հայրենական (երանական) միջավայր է վերադարձնում կատարած արարքների անհեթեթության գիտակցումը, այնպես եւ մարդը կարող է իրեն վերագտ-

նել եւ երջանկանալ, եթե ընթանա առ Աստված տանող ճշմարիտ շավիղով: Մարդ արարածը պետք է գիտակցի՝ թեեւ Աստված անսահման սեր է, սակայն Աստծուն որդեգրվելը այլեւս ողորմաբար չի լինելու, այլ՝ մարդու կամովին վերադարձով. «Նաեւ անառակ որդին գոլով ՝ մեք համբուրիմք յերկնաւոր Հաւրէն ըստ ասելոյ առակին յԱւետարանն» (էջ 772): Կարելի է ասել՝ «անառակ որդու» բարոյական խորհուրդը հանգերգի նման անցնում է գրքի մեկ ծայրից մյուսը եւ ի վերջո բացարձականում աշխատության ավարտին. «Ապա յիրաւի կարաւտին մեզ հրեշտակք, նաեւ նախանձին ընդ մեր անչափ ձիրն, որ տուաւ ի Փեսայէն, որպէս ասէ Տէրն առակաւոր բանիւն, որ են հրեշտակք, թէ՝ «այս քանի ամք են, զի ծառայեմ քեզ եւ երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի. Ուլ մի երբէք ոչ ետուր ինձ, զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ. եւ դմա, որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զեզն պարարակ զենէր» (էջ 844): Նկատելի է, որ «զղջումն» իբրեւ հոգեվիճակ ունի հատուկ իմաստ, եւ Նարեկացին հենց այնպես չի մեջբերում «անառակ որդու» օրինակը: Ինքնամաքրման եւ ինքնակատարելագործման է դիմում զղջացող մարդը, եւ դա տեղի է ունենում ինքնաքննադատմամբ:

Միջնադարում հոգեւոր այդ ընթացքն սկսել է ինքնաձաղկմամբ. եթե մարդը մեղանչել է, ապա պետք է գիտակցի իր մեղքը, զղջա եւ ապաշխարի: «Ժամանակակից մարդու համար, - գրում է Սեյրան Զաքարյանը, - այսպիսի մոտեցումը կարող է անհասկանալի թվալ... Սակայն միջնադարի մարդու համար ինքնաձաղկումը բոլորովին այլ արժեք ու նշանակություն է ունեցել: Ինքնաձաղկումը նշանակել է դարձ դեպի Աստված. դա մաքրագործման ու բարոյական կատարելագործման սկիզբ է եղել»[5]: Նարեկացու աշխատության մեջ հոգեւոր այդ դարձը արտահայտվում է ավետարանական որոշ առակների յուրահատուկ մեկնությամբ: Նկատում ենք նաեւ՝ նա կողմնակից է այնպիսի դարձի, որը պայմանավորված չէ բռնի ու արտաքին գործոններով, այլ առաջին հերթին ենթադրում է ազատ կամքի դրսեւորում: Աստվածաստեղծ բոլոր գոյությունները, էությունները եւ նույնիսկ հրեշտակները կոչված են մարդուն, իսկ մարդը՝ Աստծուն ծառայելու: Երկուսին էլ տրվել են հատուկ արժանիքներ ու կոչում. արարչակարգում մարդը ստորադաս չէ, այլ ընդհակառակը՝ բարձր, որովհետեւ օժտված է ազատ կամքով եւ ունի Աստծուն որդեգրվելու հնարավորություն: «Մարդ կոչի նաեւ թագաւոր», - գրում է Նարեկացին: Աստծո կողմից թագավոր կարգված մարդն արարչագործության պսակն է, որովհետեւ բնությունը հանձնվել է նրա տնօրինությանը, ուստի նրանով է պայմանավորված ու նրա միջոցով է իմաստավորված ողջ իրականությունը: Գրիգոր Նարեկացու իդեալը Աստծո որդի դառնալն է: «Որպէս եւ արձակ բանիւք ասէ երանելի վարդապետն Յոհան, թէ՝ «Դու մի՛ յերկուանար, թէ ոչ լինիս որդի Աս-

5 **Ս. Զաքարյան**, Հայկական Վերածննդի հարցը ,Երեւան, 2006, էջ 154:

տուծոյ, զի անկարելի էր Որդւոյն Աստուծոյ լինել Որդի մարդոյ, քան թէ մարդոյ՝ որդի Աստուծոյ լինել» (էջ 867): Մեր մեկնիչի կարծիքով՝ դա անհնարին չէ, եթե կան կատարյալ դարձնող պատվիրաններ ու միջոցներ, ապա խնդիրը մարդու մեջ է:

Այս կյանքը գիշեր է այն կյանքի համեմատ, մթին, աղջամուղջով ծածկված ուղիներ, ինչպես բանտի մեջ,որոնք անտեսանելի են դրսում մնացողների համար. փոքրի պատճառով չի կարելի մեծը կորցնել: Այս եւ նման բաների մասին է պատմում Սուրբ Գիրքը, ինչպես նաեւ Սողոմոնի «Երգ Երգոցը»: Ավետարանական պատվիրանների նպատակն է՝ մարդուն դարձնել անձնական փրկության խնդիրներով մտահոգված եւ կյանքի կատարելագործման հարցում պատասխանատու: Նա հանդիմանում է փարիսեցիության ու մոլեռանդ հավատի համար եւ խրախուսում ամեն ինչում չափի պահպանման բարոյական սկզբունքը: Լինի հավատցյալ թե անհավատ, իշխանավոր թե հասարակ քաղաքացի, չպիտի հատի ողջախոհության սահմանը: Նարեկացու որոշ մտքեր այսօր եւս տեղին են ու օգտակար, հատկապես վերջին շրջանում, երբ շատուշատ հասարակական գործիչներ փորձում են իրենց գործունեությամբ ու քարոզչությամբ օգտակար լինել հանրությանն ու երկրին, սակայն, ինչպես նկատելի է, հակառակ պատկերն է ստացվում: Օրինակ՝ քննադատում են, թե երկրի ոչ բարվոք վիճակի, չարաշահումների, աշխատատեղերի բացակայության եւ այլնի պատճառով բնակիչները ճարահատ լքում են իրենց երկիրը եւ մատնվում պանդխտության, սակայն, ինչպես փորձն է ցույց տալիս, իրենց քննադատությամբ ավելի շատ նպաստում են անցանկալի գործընթացների զարգացմանը, քան կասեցմանն ու բարելավմանը: Ահա թե ինչ է գրում Նարեկացին. «Այսու աւրինակաւ ուսուցանէ, թէեւ առաքինութիւն պիտոյ է պտղաբերել պարտիզին Աստուծոյ, այլ յանչափէն փախչել պարտ է եւ ընդ մէջն գնալ, զի մի՛ անչափութեամբն գլեսցի» (էջ 807): Նույնն է նաեւ հավատի, զղջման ու սգի դեպքում: Եթե մեկն իր գործած մեղքերի համար տխրության մեջ լինի, չպետք է չափից առավել սգա, որպեսզի հուսահատության չմատնվի եւ չասի՝ փրկություն չկա:

Ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով է հնարավոր կասեցնել այդ ամենը եւ նպաստել հոգեւոր բարիքների զարգացմանը. Նարեկացին պատասխանում է՝ Եկեղեցու միջոցով, քանի որ այն հոգու մայրն է. «Վասն այնորիկ պիտոյ է զեկեղեցի առաւել սիրել, քան զմարմնոյ ծնողն՝ վասն առաւել ծնողութեանն: Զի որպէս հոգի առաւել է, քան զմարմին, սոյնպէս եւ հոգւոյ մայր՝ քան զմարմնոյ մայր» (էջ 842): Մեր օրերում, Եկեղեցուց բացի, կան ընկերային բազում հաստատություններ, տարատեսակ կրթական ծրագրեր ու նախագծեր, որոնց խնդիրն է կրթել եւ համապատասխան դաստիարակություն տալ մարդուն, որպեսզի վերջինս ճիշտ ընտրություն կատարի կյանքում: Ինչպես բոլոր ժամանակներին, նույնպես եւ Նարեկացու դարաշրջանին հատուկ է եղել մի հիմ-

նախնդիր. դա մարդու կողմից մարդու ստրկացման ու չարաշահման ցավալի հարցն է, որը հեղինակի ընկալմամբ՝ մարդու կոչումի ու հատկությունների թյուրըմբռնման եւ ոչ ճիշտ բանեցման արդյունք է: Դրա անհրաժեշտությունից դրդված՝ հեղինակը աշխատության դրվագները մեկնելիս անդրադառնում է մարդու համակեցության, կնոջ եւ տղամարդու, իշխանների ու հպատակների, հոգեւորականների ու հավատացյալների փոխհարաբերության կարեւոր հարցերին:

3. Կնոջ եւ տղամարդու փոխհարաբերության հիմնահարցը. Նարեկացին գտնում է, որ Աստծո՝ մարդու նկատմամբ ունեցած սերը նման է հարսի հանդեպ փեսայի տածած սիրուն: Ինչպես փեսան է ցանկանում, որ իր հարսը լինի կատարյալ, գեղեցիկ ու անթերի, այդպես Աստված է ցանկանում մարդուն տեսնել կատարելության հասած: Հենց այս դիտանկյունից Նարեկացին գնահատում է տղամարդու եւ կնոջ փոխհարաբերությունը եւ նրանց փոխադարձ ամենապատվելի սերը. «Արդ, չիք յերկրի պատուականագոյն եւ առաւել քան զսէր առն եւ կնոջ» (էջ 766): Տղամարդու եւ կնոջ սերը Աստծուց տրված վեհ զգացմունք է, քանի որ այն մարդկային կյանքի հիմքն ու իմաստն է: «Արդ, յայտ իսկ է, որպէս առաքեալ ասէ, թէ Ադամ ոչ պատրեցաւ յաւձին սուտ խոստումն, ոչ սատանայիւ, այլ կինն պատրեցաւ եւ յանցեաւ, եւ Ադամ յաղագս ոչ բաժանելոյ ի կնոջէն եկեր զպտուղն եւ սիրելոյ զնա, այլ ոչ վասն աստուածանալոյ, որպէս կինն» (էջ 766): Ըստ Նարեկացու՝ տղամարդն Աստծո պատկերով ստեղծված, նրա փառքով կերտված եւ շնչով ոգեղինացած արարչագործության արդյունք է, իսկ կինը՝ նրա կողոսկրից առաջացած էակ, առանց որի չկա կյանք, կենսագործունեություն ու հարատեւություն: Այս տարասեռ էակները միանում եւ «ի մի» են դառնում աստվածատուր սիրո միջոցով: Սա մեծ ուժ է, կյանքի աղբյուր, սակայն այն դեպքում, երբ պահվում է օրենքը, եւ նրանք սիրով են միավորվում եւ ոչ թե գետնամած հաշվենկատությամբ. «Իսկ որ անբիծ եւ անարատ գայ ի սուրբ ամուսնութիւնն, եւ անճառ սիրով սրբով Հոգւոյն Սրբոյ իցեն միաւորեալ ընդ միմեանս, այնմ աւրհնութեամբն աւրհնին, որով Ադամն եւ Եւայն աւրհնեալ միաւորեցան» (էջ 766): Աստված ստեղծել է Եւային, որպեսզի Ադամը կողակից ունենա, զգա ընկերակցության բերկրանքը եւ, որ ամենակարեւորն է, Աստծո նմանությամբ ստեղծված մարդու կերպարը բազմանա: «Նա եւս եւ վասն ընտանեաց սիրոյ բազումք ի Քրիստոսէ իսկ անկան եւ ուրախացան ի հալածանաց ժամանակսն: Այլեւ Ադամ եւս ի դրախտէն եւ ի լուսեղէն փառացն յաղագս կնոջն սիրոյ մերժեցաւ եւ արտաքսեցաւ եւ ոչ վասն Աստուած լինելոյ, այլ ի նորա սիրոյն ծանր համարեցաւ քակիլ, որ գիտէր ճշմարտապէս, թէ պատժելոց է ինքն յԱստուծոյ, զի ոչ էր անգէտ, այլ լի մարգարէական հոգւով» (էջ 766): Նրա խոսքերից հետեւում է, որ կնոջ ու տղամարդու միությունը կոչված է երջանկություն պարգեւելու:

Ի տարբերություն իր ժամանակի կրոնափիլիսոփայական մտքի, որ զգա-

յական սերը ստորադասում է հոգեւոր, բացարձակ կոչվող սիրուն՝ Նարեկացին չի գերադասում ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, այլ դրանք դիտարկում է որպես փոխպայմանավորող տարրեր: Զգայական սերը տարբեր սեռերի միջեւ եղած փոխադարձ զգացմունքն է, նրանց գոյությունն իմաստավորող եւ պայմանավորող հարաբերությունը, հետեւաբար նրանցից յուրաքանչյուրն առանց մյուսի անկատար է ու թերի: Իր ժամանակի գերիշխող մտածողությանը հակառակ՝ Նարեկացին կնոջը պատկառելիության ու օրինակելիության առումով նույնիսկ վեր է դասում տղամարդուց. «Զի զհամեստութիւն ունին որպէս զկանայս, վասնզի պատկառելի է կանանց ազգ առաւել, քան զարանց» (էջ 775): Ըստ Նարեկացու՝ թեպետ Եւան իր փառատենչությամբ մարդկությանը մեղքի մեջ գցեց, սակայն Տիրամոր միջոցով կնոջ պատիվը վերածնվեց ու վերականգնվեց. «Նա եւ յետ ուտելոյն ի պտղոյն գիտաց մարգարէութեամբ զփրկութիւնն մեր, զոր ի ձեռն կնոջն էր լինելոց, այսինքն՝ ի ձեռն Սուրբ Աստուածածնին, վասն որոյ եւ կեանս կոչեաց զկինն. ապա թէ ոչ այդպէս, զիա՞րդ կոչէր զնա կեանս, որ ամենայն ծնողաց Ադամայ մահու պատճառն եղեւ» (էջ 767): Կինը արժանի է հարգալից վերաբերմունքի, առավել եւս, որ ի վերուստ օժտված է մայրանալու առաքելությամբ ու առաքինությամբ: Աստվածամոր կերպարը նկատի ունենալով՝ Նարեկացին գրում է, որ կինը ոգեշնչող ուժ է, մարդու իդեալը, նրա երջանկությունն ու իմաստությունը:

«Երգ Երգոցի» մեկնության մեջ նկատում ենք նաեւ մարմնական սերը, որը գովերգում է մեկնիչը: Կարելի է ասել, որ մարդիկ հնում եղել են այնպես, ինչպես հիմա. հիացել են գեղեցկությամբ, դրա հմայքով եւ ուժով, հաճույք են ստացել դրանից եւ ընդհանրապես եղել են «մարմնից ու արյունից»: Իսկ արդիականության առումով, կարելի է ասել, որ կինը, անկախ ժամանակաշրջանից, բարքերից ու կարգերից իր բնությամբ եւ էությամբ գերել է ամենքին: Խնդիրն այն է, որ նա արժանի է ավելի բարձր գնահատանքի, որպեսզի չխախտվի ի վերուստ սահմանված կարգը :

4. Հասարակական-քաղաքական հարցադրումները. Նարեկացու մեկնության մեջ առանձին արժեք ունեն նաեւ հասարակական- քաղաքական բնույթի հարցադրումները: Լինելով հոգեւոր դասի ներկայացուցիչ՝ Նարեկացին ընթերցողին ներկայանում է որպես հասարակական ու քաղաքական այլազան հարցերով հետաքրքրված ջերմեռանդ գործիչ: Նա, տիրող ավատատիրական կարգերը, բարքերը եւ մարդկային հարաբերությունները պայմանավորող դասակարգային անհավասարությունը քննադատելով, զանազան խրատներ է տալիս թագավոր-պատվիրատուին. «Որ եթէ շատ եւ եթէ սակաւ ունին շնորհս կամ ժողովուրդս կամ ինչս համարս պարտին տալ երկնից թագաւորին Սողոմոնի հոգեւոր առաջնորդք եւ մարմնաւորք, եպիսկոպոսունք եւ քահանայք, թագաւորք եւ իշխանք եւ այլ պաշտաւնեայք՝ եթէ՛ մարմնաւորք եւ եթէ՛ հոգեւորք: Նա եւ աշխարհականն եւ զինուորն ընդ կնոջ եւ ընդ որդ-

ւոց եւ ընդ ծառայից պարտի տալ համարս» (էջ 873): Հասարակ քաղաքացուց մինչեւ բարձրաստիճան պաշտոնյա պարտավոր են պատասխանատու լինել իրենց գործում, մարդկային հարաբերություններում, ընտանիքում եւ այլուր, քանի որ այդպես արտահայտվում է սերը, հարգանքը եւ հավատը: Մեկնիչը գրում է. «Ով ինչին նայում, դրան էլ նմանվում է»: Այդ առումով, բարձրաստիճան պաշտոնյաները, որպես վեհ առաքինություն իրականացնողներ, իմաստության, արիության, հոգատարության եւ այլ արժանիքների օրինակ պետք է լինեն հասարակ քաղաքացիների համար: Հետեւաբար, առաջնորդները պարտավոր են մարդկանց մեջ արատները նկատել, սիրով եւ արցունքներով բժշկել, ինչպես որ իրենց անձի հետ կվարվեին, այլ ոչ թե իշխանությունից ու կոչումից գոռոզացած՝ մեծամտորեն անտեսության մատնեն. «Եկն հովուել եւ արածել զոչխարս, ոչ եւս ագահ հովուաւք հովուիլ, որպէս եւ ասէ Եզեկիէլիւ մարգարէիւ, որ զարաւտն արմոջ նախ ինքեանք ուտէին եւ զյստակ ջուրսն նախ ինքեանք ըմպէին, եւ զմնացեալսն յինքեանց զընդգետինս հարեալսն զդարմանս եւ զկոխեալսն ի կճղականաց զպղտորեալ ջուրսն թողուին հաւտին» (էջ 833):

Օրինակելի առաջնորդությունն այն է, որ երկրի տերն ու տիրակալը խոհեմաբար է կառավարում հպատակներին եւ դրանով իմաստության օրինակ դառնում նրանց համար. «Այլ զինքն լինել հովիւ՝ ասէ սովիմբ մարգարեիւ, որ ճշմարտութեամբ արածէ եւ յանձանձէ եւ ոչ տայ գողոց ապականել, այլ առաքինութիւն եւ արդարութիւն ջամբեալ մեզ՝ ժողովէ ի մէնջ շուշանս, այսինքն զծաղիկս հաւատոյ զբանին եւ զսրբութիւն, որով զվարճանայ փեսայն Քրիստոս» (էջ 833-834): Ժողովուրդը հարսն է, իշխանությունը՝ փեսան: Իշխանության պարտքն է ճարտարությամբ մոտենալ իր գործին. եթե ուզում է բարեկեցիկ եւ խաղաղ երկիր ունենալ, ապա նախապես անհրաժեշտ է հոգալ առաքինի բարքերի մասին, կրթել եւ համապատասխան դաստիարակություն տալ ժողովրդին, հոգալ նրա մասին: Այս մտահոգումներից ելնելով՝ Նարեկացին պատկերավոր քննադատում է նրանց, ովքեր չեն մտածում ընդհանուր շահի մասին եւ բոլորին մեծ խնդիրների առջեւ են կանգնեցնում: Պարզորեն երեւում է, թե հեղինակը խնդիր ասելով ինչ նկատի ունի. «Այսինքն զդաւանութիւնն եւ զուխտն, զոր ուխտեցին ի ծննդեան աւազանին, սիրել զՀայրն Աստուած եւ զՄայրն Եկեղեցի, ստեցին եւ աւտարացան», «... նա եւ զաղաւթսն, զոր յեկեղեցւոջն պարտ է առնել՝ առաջի սեղանոյ նորա, ուր Սուրբ Երրորդութիւնն բնակեալ է, զայն ի գռեհս եւ ի հրապարակս եւ յանսուրբ տեղիս պաշտեն եւ զեկեղեցւոյ պատիւն գռեհաց եւ փողոցաց տան, որ դատապարտութիւն եւ ոչ ողորմութիւն գտանեն: Վասն այսր յանցանաց, որ զեկեղեցի արհամարհեն եւ արտաքոյ զպաշտաւնն կատարեն, բազում բանից եւ ողբալից աւաղանաց պէտք են, որ զայսոսիկ առնեն, եւ այլ ժամանակի պէտք են ասելոյ, զի չէ փոքր վնաս այն» (էջ 843): Սա, ըստ էության, ուղղված

է թոնդրակեցիների դեմ, որոնք արդեն իրենց կեղծ ուսմունքն էին տարածում, բայց այնպես գործուն չէին, ինչպես դարավերջին:

Ինչպես նկատելի է, Նարեկացին փորձում է իր գեղեցիկ խոսքի օգնությամբ եւ ամեն հնարավոր օրինակների միջոցով հասցեատիրոջը համոզել, որ մեծամտությունն ու հպարտությունը, անտարբերությունն ու անգիտությունն այն հուսալի միջոցները չեն, որոնցով կարելի է մարդկանց առաջնորդել: Նա, իրեն հատուկ համեստությամբ, հրաշալի օրինակներ է բերում նաեւ ուսուցիչ-վարդապետների մասին: Այս հարցում եւս ելնելով չափի պահպանման սկզբունքից՝ մեկնիչը վարդապետների գործունեությունը նմանեցնում է մարդկանց միտքն ու կյանքը քաղցրացնող անուշահոտ յուղի. նրանք իրենց սրտի եղածը պետք է տան մարդկանց՝ հաղորդակից դարձնելով Աստծո գիտությանը. «Զի մի՛ զդիւրընկալութեամբ արհամարհեսցի, իբրեւ զդիւրագիւտ իրս, եւ մի՛ անիմացութեամբն անհուսասցի գիւտի ուսանելն կամեցողաց, այլ սակաւ ջանիւ ի շտեմարանս սրտից ժողովեալ զբանս Գրոց» (էջ 828): Ամեն ինչի չափի պահմանումը ճշմարիտ է եւ օգտակար՝ անգամ Աստծո խոսքը քարոզելու պարագային. հակառակ դեպքում՝ քարոզիչների խոսքը չի հասնի նպատակին, ավելին՝ նույնիսկ իրենց դեմ կօգտագործվի: Դժվար չէ նկատել, որ Գրիգոր Նարեկացու այս կարծիքը այժմեական է: Վերջին շրջանում ի հայտ եկած տարատեսակ խմբավորումներից եւ ուսմունքներից յուրաքանչյուրն իր ձեւով ու չափով հուսահատության, անհավատության եւ մոլորության են հասցնում իրենց շարքերը ներգրավված քաղաքացիներին: Վերջիններս իրենց անձն ու հոգին են նվիրում այդ գաղափար-կաղապարներին, նույնիսկ իրենց հայրենիքի հանդեպ են ատելությամբ լցվում, օտարամոլության են մատնվում, ազգային արժեքներն են ոտնահարում, բանակում չեն ծառայում... Հետեւաբար, Նարեկացու այս մտքերը այսօր եւս տեղին են ու օգտակար: Նարեկացին հանդիմանում է քաղաքական, կրոնական եւ բարոյական կարգերն ի շահ իրենց ծառայեցնող վերնախավին՝ իշխաններին ու դատավորներին, առաջնորդներին եւ հոգեւորականներին, հորդորում է գործել մարդասիրաբար եւ եղբայրաբար. «Վասն այնօրիկ տիրեն մեզ, - գրում է նա, - զի ընդ մեր պատերազմ հարկին հարկանել հոգեւոր առաջնորդքն ընդ սատանայի, եւ մարմնաւորքն արիւն եւս պարտին հեղուլ ի վերայ մեր եւ պատերազմ տալ ընդ թշնամեաց, եւ եթէ՛ կարասեաւ եւ եթէ՛ մահուամբ, թափել ի թշնամեաց: Եւ դատ առնել իրաւամբք անակնառութեամբ անհանգիստ որպէս զԱստուծոյ սպասաւորս եւ զամենայն մարդոյ տուն որպէս զիւր համարել» (էջ 875):

Նարեկացու կրոնափիլիսոփայական ընկալմամբ՝ ժողովուրդը հարսն է, կառավարությունը՝ փեսան: Եւ ինչպես հարսն է իրեն ապահով, պաշտպանված, երջանիկ զգում ուժեղ եւ իմաստուն փեսայի կողքին, նույնպես եւ ժողովուրդը պետք է իրեն զգա՝ ճշմարիտ իշխանությանը հպատակվելով: Քրիստոս, լինելով իշխան եւ տեր ամենայն ինչի, կարող էր բռնանալ եւ իր

զորությամբ վերափոխել ամեն ինչ, սակայն դա արեց խոնարհաբար ու այդ շնորհը կտակեց մարդկությանը, ուստի թագավորների, հոգեւոր առաջնորդների եւ իշխանավորների պարտքն է՝ ամեն հնարավոր միջոց ներդնել հանուն ժողովրդի բարեկեցության:

Նարեկացու բարոյափիլիսոփայական այս հարցադրումները այսօր եւս չեն կորցրել իրենց նշանակությունն ու կարեւորությունը, հետեւաբար այս աշխատությունից արժանի դասեր կարող է քաղել ամեն ոք՝ թե՛ շարքային քաղաքացին, թե՛ ղեկավարները:

РЕЗЮМЕ

Собранные, под заглавием “Этико-философия Григора Нарекаци согласно труду “Интерпретация “Песни песней””, идеи принадлежат философу и поэту 10-ого века Григору Нарекаци, которые он высказал при интерпретации библейской “Песни песней”. Последную автор написал по королевскому заказу и инициативе, что скорей всего и послужило причиной тому, что он озвучил мысли и идеи, которые могут сделать личную и общественную жизнь лучше. Например, часть “Проблема взаимоотношений мужчины и женщины в интерпретации Песни песней” посвяшена вопросу о божественном взамоотношении двух полов, любви и браку. А в разделе “Общественно - политические вопросы в интерпретации Песни Песней” возможности анализируется выраженные в “Интерпретации” Григором Нарекаци социальные и политические позиции, его идеи и мысли касательно этой проблематики.

SUMMARY

Ideas collected under the title “Ethical philosophy according to Grigor Narekatsi’s commentary of “Song of Songs” belong to the philosopher and poet of the 10th century, Grigor Narekatsi, which he expressed in the commentary of the “Song of Songs”. Author wrote it by royal order and initiative that probably was the reason that he voiced the thoughts and ideas that can make the personal and social life better. “Problem of relations between men and women in the interpretation of “Song of Songs”: this part is devoted to the divine interrelations between the two sexes, love and marriage. In the section “Social and political issues in the interpretation of “Song of Songs” analyzed Grigor Narekatsi’s social and political positions, his ideas and thoughts regarding this problem in “Interpretations”.